

ԱՐՇԱՎ ԱՌՈՂՁ  
ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ՅԵ. Դ. ՊԻՎՈՎԱՐՈՎՅԱՆ

Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի  
Վ Ո Ր Դ Ն Ա Յ Ի Ն  
Հ Ի Վ Ա Ն Դ ՈՒ  
Բ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը

616-002.9  
M-64

Լ Ն Ր Ա Ն Յ Դ Ե Մ  
Պ Ա Յ Ք Ա Ր Ե Լ ՈՒ

Մ Ի Զ Ո Յ Ա Ռ ՈՒ Մ Ն Ե Ր Ը

ԸՋՈՎ-ՍԵՎԺՈՎԵՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ — 1935

29 JUL 2010

616-002-9

Պ-64 սր.

ԱՐՇԱՎ ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ

ՄՄՊ Ազով-Սևծովյան Յերկրային Ինստիտուտ

Բժիշկ Յե. Ի. ՊԻՎՈՎԱՐՈՎԱ

**Յ Ե Ր Ե Խ Ա Ն Ե Ր Ի  
ՎՈՐԴՆԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Պրոֆ. Ի. ՅԱ. ՍԵՐԵՐԻՅՍԿՈՒ  
Խմբագրութեամբ

Թարգմ. Հ. ԲՈՂԴԱՆՅԱՆ

ԱԶՈՎ-ՍԵՎՇՈՎՅԱՆ ՅԵՐԿՐԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
Ռուսաով-Դոն — 1935

22 JUL 2013

Աշխատավորների առողջապահության համար մղվող պայքարում, այլ միջոցառումների կարգին, շատ մեծ նշանակություն ունի ՄՈՐ ՅԵՎ ՄԱՆԿԱՆ ՀԻՔԻԵՆԱՅԻ ՈՒ ՀԻՎԱՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ հիմնական գիտելիքների լայն ծավալումը:

Մայրության յեվ մանկության պահպանության Յերկրային ինստիտուտը, Ազով-Սեվծովյան գրահրատարակչության հանձնարարությանը, կազմել է մի ԵԱՐԲ հանրամատչելի բրոշյուրներ, վորոնք վերաբերում են հիգիենայի յեվ մոր ու մանկան առողջապահության հարցերին:

«Վորդերի հիվանդությունը յերեսանների մոտ յեվ նրա դեմ պայքարելու միջոցառումները» բրոշյուրը կազմել է ինստիտուտի գիտական աշխատակից բժիշկ ՅԵ. Դ. Պիվովարովան, պրոֆ. Ի. Յո Արեբերիյսկու խմբագրությամբ:



3490  
41

### ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Յերեսանների մասսայական հետազոտումը, վոր մեր Միւլթյան սահմաններում կատարվում է համարյա ամեն տեղ, ցույց տըվեց, վոր բազմաթիվ յերեսաններ հիվանդ են վորդերով: Այս հիվանդությունն այնպիսի ծավալ է ստացել, վոր հազվագյուտ չեն պեպքեր, յերբ վորդերով հիվանդ են լինում նույնիսկ ծծկերներն, այնինչ մինչև այժմ այնպես եր կարծվում, թե շատ փոքր յերեսաններն այդ հիվանդությունից ազատ են: Փորի վորդն ավելի վնասակար է մանկական որգանիզմի համար: Վորդերով վա-

րակված յերեխաները հաճախ յես են մնում  
թե մտավոր և թե ֆիզիկական զարգացման  
կողմից: Այդ վորդերի պատճառով նրանք  
հետզհետե սկսում են թուլանալ, հյուժվել ու  
հիվանդոտ դառնալ: Այս հանգամանքն ստի-  
պում է վորդերի դեմ պայքարելու ամենա-  
կտրուկ միջոցների դիմել: սակայն այս պայ-  
քարը կարող է հաջողությամբ պսակվել միայն  
այն ժամանակ, յերբ այդ գործում ներ-  
գրավված է ազգաբնակչութունն ինքը:

Յերեխային՝ վարակումից զերծ պահելու  
համար, մայրն ու նրան խնամողները պե՛ս  
է պարզ կեւպով գիտակցեն վորդերի պատ-  
նառած վնասը յե՛վ ծանոթ լինեն նրանց,  
դե՛մ պայտաբելու միջոցառումներին:

Այս գրքույկի խնդիրն է՝ անհրաժեշտ ծա-  
նոթութունը տալ վորդերի, ինչպես և յե-  
րեխաների առողջությանը նրանց պատճա-  
ռած վնասների մասին, ու մատնացույց անել  
նրանց դե՛մ պայքարելու միջոցառումները:

## ԻՆՉ Ե ՎՈՐԴԸ ՎԱՍ ՃԻՃՈՒՆ

Փորի վորդը մի տեսակ ճիճու է, վորն  
ապրում է վորպես մակաբույժ (պարագիտ),  
այսինքն ուրիշի հաշվին: Այսպես, ապրելով  
մարդու և կենդանիների ներքին որգաննե-  
րում, վորդը սնվում է նրանց հյուժթերով:  
Վորդերն ամենից հաճախ ապրում են աղիք-  
ներում, բայց նրանցից մի քանի տեսակ-  
ներին կարելի յէ գտնել նաև թոքերում, յե-  
րիկամունքներում, ուղեղում, մկաններում և  
վոսկրներում: Վորդերը լինում են յերկու  
տեսակ՝ ա) կլոր վորդեր և բ) տափակ վոր-  
դեր կամ յերիզակներ:

Այստեղ կնկարագրենք փորի վորդերի այն տեսակները միայն, վորոնք ամենից հաճախ են պատահում յերեխաների մոտ:

### ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԱԶՄԱՆՈՒՄ ՎՈՐԴԵՐԸ

Վորդերն, իրենց արբունքին հասնելով, սկսում են բազմաթիվ ձվեր ածել այն միջավայրում, ուր նրանք ապրում են: Յուրաքանչյուր վորդ ահագին քանակութեամբ ձու յե ածում: Վորդերի բազմացումն այսպիսի ահռելի չափերի յե հասնում, վոր այս կողմից նրանց հետ չեն կարող համեմատվել կենդանական թագավորութեան ներկայացուցիչներից և՛ վոչ մեկը:

Վորդի ածած յուրաքանչյուր ձվից, բարեհաջող պայմաններում, կարող է զարգանալ սաղմ, վորը նորից ընկնելով մարդու մարմնի մեջ՝ ընդունակ է հասուն վորդ դառնալ ու իր հերթին ձվեր ածել: Այստեղ անհրաժեշտ է նշել մի կարևոր առանձնա-

հատկութիւն, վոր բնական է վորդերին. այդ այն է՝ վոր նրանք, իրենց հետագա զարգացման համար, պետք է որգանիզմից դուրս հանվեն, վորովհետև թրթուրները չեն կարող զարգանալ և հասուն վորդեր դառնալ իրենց ծնողական որգանիզմում:

Վորդերի զարգացումը ղիտելիս, պետք է տարբերութիւն ղնել նրանց՝ հասարակ յեղանակով զարգացման և այն զարգացման մեջ, վոր տեղի յե ունենում այսպես ասված «միջակա տերերի» միջոցով (միջնորդի միջոցով):

Կան վորդեր, վորոնց ձվերը, մարմնից դուրս ընկնելուց հետո, սկսում են հասունանալ արտաքին միջավայրում. այնուհետև, յերբ սրանք կուլ տրվեն, ընդունակ են լինում վարակում առաջացնելու: Ընդվորում կարող են ղիտվել զարգացման հետևյալ յեղանակները. 1) յեթե ձուն զարգացել է եզի մարմնում և հետո յե դուրս ընկել՝ վորպես արդեն պատրաստ կամ համարյա պատրաստ

Թրթուր, ապա հասկանալի յե, վոր նրան շատ յերկար ժամանակ հարկավոր չե, արտաքին միջավայրում հասունանալու համար: Եգի մարմնից դուրս ընկնելուց մի 6 ժամ անցած նա համարյա իսկույն ընդունակ ե վարակում առաջացնելու. վորպես որինակ՝ կարելի յե մատնանշել ասկարիզը, այսինքն սրատուտ ճիճուն կամ պիտուկը (ոստրիցա). 2) յեթե ձուն դուրս ե ընկել՝ իր նախնական զարգացման շրջանը եգի մարմնում դեռ չանցկացրած, ապա ուրեմն այդ զարգացմանը նա պետք ե հասնի արտաքին միջավայրում: Այս ձվերը՝ դուրս ընկնելիս՝ տակավին ընդունակ չեն վարակում առաջացնելու. նրանք պետք ե իրենց հասունացումը լրացնեն, վորի համար անհրաժեշտ ե վորոշ ժամանակ՝ նայած մակաբույծի տեսակին, ջերմության և խոնավության աստիճաններին և այլն. վորպես որինակ՝ կարելի յե մատնանշել մազավոր վորդի (վրասոզլավի) և պիտուկի ձվերը: Որգանիզում միատեսակ

չեն պահում իրենց այն ձվերը, վորոնք արտաքին միջավայրում հասունանալուց և վարակելու ընդունակ դառնալուց հետո յեն կուլ տրվում հասակավոր մարդու. կամ յերեխայի կողմից: Այսպես, մազավոր վորդի ձվից դուրս յեկած Թրթուրն ընդունակ ե կցվելու տիրոջ հյուսվածքին ձվից դուրս գալուց հետո իսկույն, առանց նախապես թափառելու տիրոջ արյունատար անոթներում. այնիչ սրատուտ վորդի (ասկարիզի) Թրթուրներն, աղիքներին կցվելուց առաջ, անպատճառ պետք ե թափառած լինեն արյան մեջ, շնչուղիներում և ստամոքսում. անս այսպես ե լինում հասարակ զարգացումը:

«Միջակա տիրոջ» (միջնորդի) միջոցով յեղած զարգացումն այն ե, յերբ ձուն հասունանում ե վոչ թե հողում, այլ վորոշ կենդանու մարմնում (խոզի, յեջուրավոր անասունի և այլն), այսինքն՝ այսպես ասված «միջակա տիրոջ» (միջնորդի) միջոցով: Միջակա տիրոջ մարմնում ե ձուն լրաց-

նում իր հասունացումը և դառնում ե ֆիննս,  
այսինքն բշտաձև ճիճու, վորը՝ կուլ արվե-  
լուց հետո՝ մարդու աղիքներում դառնում ե  
հասուն վորդ:

### ՅԵՐԵՒԱՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՎԱՐԱԿՎՈՒՄ ՎՈՐԴՈՎ

Գիտությունը ճշտորեն հաստատել ե, վոր  
վորդերի բեղմնավորումը և նրանցով վարա-  
կումը տեղի յե ունենում միայն նրանց  
ածած ձվերի միջոցով: Վնրչափ տարբեր են  
այս կամ այն վորդերի կյանքի և բեղմնա-  
վորման պայմանները, նունչափ տարբեր են  
նրանցից վարակվելու յեղանակները: Այս-  
պես, յերբ զարգացումը տեղի յե ունեցել  
ուղիղ ճանապարհով, այդ դեպքում վարակ-  
ման աղբյուր են հանդիսանում հողը, ջուրը  
և այն բոլոր առարկաները, վորոնք կեղտոտ-  
ված են վորդերի ձվերով կամ թրթուր-  
ներով: Զանազան կենդանիներ, այս հիվան-

դություններում, կարող են փոխադրողները  
դեր խաղալ (ճանճերը, վորոնք վարակը փո-  
խադրում են իրենց կնճիթներով և թաթիկ-  
ներով, շունը՝ իր վտաքերով, բրդով և  
այլն):

Յերբ զարգացումը կատարվում ե «մի-  
ջակա տիրոջ» (միջնորդի) միջոցով, վարակ-  
ման աղբյուր ե հանդիսանում ինքը «մի-  
ջակա տերը», վորի հետ շփում ունենալուց  
ե տեղի ունենում վարակումը: Այսպես, որի-  
նակ, բշտաձև վորդով՝ եխինոկոկով վարակ-  
վում են այն դեպքում, յերբ վարակված  
շան հետ շփում են ունենում: Վարակվել  
կարելի յե նաև արդեն վարակված սպան-  
ված կենդանուն (միս, ձուկ) ձեռք տա-  
լով, կամ լավ չտապակած միս կամ ձուկ  
ուտելով:

Վորդերի նկարագրությունն անելիս, մենք  
մանրամասն կանգ կառնենք այն ուղիները  
վրա, վորով վորդերի առանձին տեսակները  
մուտք են գործում որգանիզմը:

## ԻՆՉ ՎՆԱՍ ԵՆ ՀԱՍՅՆՈՒՄ ՎՈՐԴԵՐԸ ՅԵՐԵՄԱՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ

Վորդերը, բնակութիւն հաստատելով աղիքներում, բազմապիսի վնասներ են հասցնում որդանիզմին:

Նրանք կարող են խոցել աղիքների լորձաթաղանթը և ճանապարհ բանալ միկրոբների առաջ: Իրա համար ե, վոր վորովայնի տիֆով, արյունային փորլուծումով (դիզենտերիայով), աղիքների տուբերկուլոզով և այլն ամենից շատ և ավելի հեշտությամբ հիվանդանում են վորդ ունեցող հիվանդները:

Բացի դրանից, բոլոր տեսակի վորդերն ել շատ կամ քիչ արտադրում են զանազան թուլյներ, վորոնք ներգործում են արյան վրա, առաջացնելով մեծագույն մասն այն յերեվուլթիներ, վորոնք սովորական են վորդի հիվանդութիւնն ունեցողների համար: Այդ հիվանդութիւններն են՝ գլխապտույտ, գլխացավ, ախորժակի բացակայութիւն և այլն:

Հետեւեալ, թունաւոր նյութեր արտադրելով, վորդերը վարակում են մանկական որդանիզմը. սնվելով մանկան այն հյութերով, վորոնք անհրաժեշտ են նրան այն միջոցին, յերբ որդանիզմը՝ զարգանալու շրջանում լինելով՝ կարիք ունի մեծաքանակ սննդարար նյութերի: Այդ վորդերն առաջացնում են որդանիզմի հյուծում, սակավարյունութիւն և զարգացման հետամնացում:

Վորդերի մի քանի տեսակները, մտնելով յերեխայի լյարդը, թոքերը, շնչուղիները և կյանքի համար մյուս կարևոր որդանները, կարող են ծանր խանգարումներ առաջացնել, իսկ յերբեմն նաև մանուկների մահվան պատճառ դառնալ:

Վորդերի յուրաքանչյուր տեսակն առաջացնում ե տարբեր խանգարումներ, նայած նրա թուլյնի ուժին, նրա այն առանձնահատկութիւններին, վորոնք կապ ունեն նրա՝ մարդու մարմնում ունեցած կյանքի պայմանների հետ:



## ՅԵՐԵՍԱՆԵՐԻ ՄՈՏ ԱՄԵՆՅՑ ՀԱՃԱՍ ՅԵՐԵՎԱՅՈՂ ՎՈՐԴԵՐԸ

Կլոր վորդերի բազմաթիվ և բազմազան տեսակներից մանուկներն ամենից ավելի տառապում են ասկարիդներից (վիշապակներից), սրատուտներից և մազագլուխ կոչված վորդերից:

Յերիզակներից (յերիզաձև վորդ) ամենից հաճախ պատահում են սուլիտերների մի քանի տեսակները, իսկ շատ ցանցառ՝ եխինոկոկները (պարկվորդերը):


## ԱՍԿԱՐԻԴՆԵՐԸ (ՎԻՇԱՊԱԿՆԵՐԸ)

Ամենատարածված վորդերը յերեխաների մեջ — ասկարիդներն են (վիշապակները)՝ նրանցով հիվանդ յերեխաների թիվը տեղտեղ հասնում է 95%-ի, թեև կան և այնպիսի վայրեր ու ռայոններ, ուր այդ վորդով վարակվածների թիվը շատ աննշան է: Այսպես, օրինակ, Միջին Ասիայում՝ Տաշ-

քենտում հազիվ 3%-ի է հասնում: Կարմիր վորդերի մեջ ասկարիդներն ամենախոշորներն են. նրանք սպիտակ գույնի յեն, յերբեմն՝ թեթև վարդագույն, բոլորաձև. նման են անձրևի վորդերին. Հասուն եզերը մինչև 30 սանտիմետր յերկարություն են ունենում, վորձերը միքիչ կարճ են՝ 20—25 մմ: Ասկարիդի առջևի՝ գլխի տուտը հետևինից ավելի բարակ է ու նեղ: Այստեղ է նրա բերանի անցքը, վոր տանում է դեպի յերկարավուն վորկորը: Սրանց մկանները շատ ուժեղ են, և դրանց շնորհիվ է, վոր նրանք կարողանում են ուժեղ շարժումներ անելու: Ասկարիդների առանձնահատկություններից մեկն է նրանց՝ թափառելու և նեղ անցքերից թափանցելու հակումը: Այս առանձնահատկություններով պետք է բացատրել, վոր մակարույծները զանվում են մտղծապարկի ծորանի լուսանցքում, յենթաստամոքսային գեղձերի ծորանում, վորկորում, շնչուղիներում և այլն:

Ինչպես վերևում ասացինք, ասկարիդ-  
 ների բազմացման համար անհրաժեշտ է,  
 վոր ածած ձուն մնա խոնավ և տաք հողի  
 մեջ: Չվի հասունացումը տևում է 2 — 4  
 շաբաթ, նայած շերմաստիճանին: Հասու-  
 նացման վերջերին ձվի մեջ արդեն գոյանում  
 է ճիճու-թրթուրը: Կուլ տրված հասուն  
 ասկարիդներից աղիքներում առաջանում են  
 թրթուրներ, վորոնք՝ մինչև աղիքների  
 մեջ վերջնականապես բնակություն հաստա-  
 տելը, յերկար թափառում են տիրոջ որգա-  
 նիզմում: Նրանք ծակում են աղիքների պա-  
 տերը, մտնում են աղիքների յերակը, այ-  
 սինքն արյունատար անոթները, իսկ այդտե-  
 ղից, արյան հոսանքի հետ միասին, անցնում  
 են թոքերը, շնչուղիները ու բերանի խո-  
 ոռչը: Այսպիսի յերկար տարածություն անց-  
 նելով՝ թրթուրը բերանում խառնվում է  
 թքի հետ և կուլ է տրվում: Ընկնելով ստա-  
 մոքսը և աղիքները, ասկարիդն այնտեղ  
 մնում է մի առժամանակ և սկսում է արա-

գությամբ աճել ու դառնում է շատևն ան-  
 կարիդ: Ասկարիդները սովորաբար ապրում  
 են մարդու և կենդանիների նեղ աղիքներում:  
 Շների և կատուների մոտ նրանք հաճախ  
 ապրում են նաև ստամոքսում:



Ասկարիդներ (վորձ և եղ)

Ասկարիդի մարմինը իրենից ներկայաց-  
 նում է մի պարփակված փող, վոր լցված է  
 թունավոր հեղուկով: Յեթե ասկարիդը ծա-  
 կես կամ կտրես, նրա միջից դուրս է ցայ-  
 տում մի այնպիսի հեղուկ, վոր յեթե ընկնի  
 ձեռքիդ վրա, կաշվի սաստիկ զրզռում  
 կպատճառի և կարող է նույնիսկ ծանր բոր-  
 բորում առաջացնել:



Գիտնականները փորձ են արել. վերցրել են ասկարիդի հեղանյութից միքանի կաթիլ և ներարկել են այն՝ ճագարի կամ ծովային խոզուկի կաշվի տակ: Ներարկումից հետո այդ փոքրիկ կենդանիները շատ շուտով սատկել են. յերբ այդ հեղուկից մի կաթիլ կաթեցրել են ձիու նման ուժեղ կենդանու աչքում, սաստկապես բորբոքվել է աչքը, և ընդհանուր ծանր հիվանդություն է զարգացել:

Այս փորձերից պարզվեց, վոր ասկարիդների մեջ կա մի շատ թունավոր և վտանգավոր հեղուկ: Կենդանի ասկարիդում այդ թույնը գտնվում է ամուր թաղանթի մեջ: Քանի դեռ այս վորդերը կենդանի յեն, և նրանց ամբողջությունն անվնաս է մնացել, այս թունավոր հեղանյութն արտազատվում է աննշան չափով, բայց հենց վոր ասկարիդը սատկեց, նա քայքայվում է, ու այն ժամանակ թույնը արտազատվում է արդեն մեծ քանակությամբ և աղիքներից ներծրծ-

վելով՝ կարող է ըուպեյապես մահ պատճառել:

Կան նշաններ, վորոնք թելադրելու յեն մորը մտածելու, վոր յերեխան հիվանդ է ասկարիդով: Այդ նշաններն են՝ ախորժակի բացակայությունը (յերբեմն էլ ընդհակառակը՝ արտակարգ ախորժակ), թքահոսությունը, ճաշակի խեղաթյուրանքը, սիրտ խառնելը, փսխումը և շատ սակավ՝ ցնցումներ: Այնուհետև առաջանում է փորոտիքի անկանոն գործառնություն, յերբեմն արյունախառն, փորի փքվածություն, յերբեմն նաև փորկապություն:

Յերեխաներն արտաքուստ փոխվում են. նրանք նիհարում են, գունատվում. գանգատվում են պորտի շրջանի կամ սրտի գդալի ցավերից, դառնում են ներվային, անհանգիստ են քնում. քնած ժամանակ անկողնից հանկարծ վեր են թռչում, ճչում են ու ցնցվում:

Իբրև ասկարիդով հիվանդության մի որի-

նակ, բերենք հետևալ զեպքը, վորի ժամանակ ստամոքսային-աղիքային յերեվույթներն առաջնակարգ տեղ եյին գրավել:

Հինգ տարեկան մի յերեխա յերեք շաբաթ ե՛ բռնված եր համառ տեսակի փրստուով և որը յերեք անգամ թափում եր, մանավանդ յերեկոները. գանգատվում եր փորկապությունից, գլխացավից և փորի ցավերից: Փորը փքված եր, առանց ցավերի: Յերեխան զիշերները վատ եր քնում, ճչում եր ու տեղից վեր թռչում: Կղկղանքը հետազոտելիս՝ ասկարիդի ձվեր գտնվեցին: Նշանակվեց համապատասխան բուժում սնտոնինով: Դուրս ընկան յերեք հատ սատկած ասկարիդներ, և հիվանդագին բոլոր յերեվույթներն անհայտացան:

Ասկարիդներով հիվանդանալուց առաջացած մյուս ախտանիշները սովորաբար կապված են այն վայրի հետ, ուր նրանք գտնվում են: Այսպես, ասկարիդները յերբեմն սողալով մտնում են լյարդի մաղձային ծո-

րանը, վորի հետևանքով կարող են խցվել մաղձային անցքերը, և այն ժամանակ մաղձը, չկարողանալով թափվել աղիքների մեջ, կանգ ե պոնում, ներծծվում ե արյան մեջ, վորից և առաջանում ե զեղնախտը:

Մի տղա գանգատվում եր փորի ցավերից, սրտխառնելուց, չափազանց հյուժվել եր: Յերբ սա մեռավ, նրան դիակերձեցին ու տեսան, վոր նրա լյարդն ամբողջապես լցված ե սպիտակ գույնի կլոր վորդերով, վորի պատճառով և մահացել եր յերեխան:

Առանձնապես վտանգավոր բարդություն ե առաջանում յերեխայի համար այն փամանակ, յերբ ասկարիդները թափանցեն նրա շնչուղիները: Տարաբախտաբար այդպիսի դեպքեր յերբեմն լինում են: Ասկարիդների՝ յերեխայի վորկորը կամ շնչափողը թափանցելուց առաջացած յերևույթները շատ ծանր են լինում, իսկ հիվանդության ամբողջ ընթացքը կարճատև: Սովորաբար այսպիսի դեպքերն սկսվում են ուժեղ հազերով, վո-

րոնք առաջանում են մակաբույժի՝ վորկորի լորձաթաղանթի հետ առաջին իսկ հպումից: Յեթե այս հապի ցնցումները կամ հրոցներն անգոր լինեն մակաբույժին դուրս մղելու, ապա հետագայում, յերբ նա մտնի ձայնաճեղքը, վերջինը ջղաձգաբար խցվում է: Ասկարիդը դեռ ամբողջապես շնչափողը չմտած՝ յերեխան կարող է միջանի ըուպելում մահանալ: Իսկ յեթե մակաբույժը կարողանա դուրս գալ ձայնաճեղքից, այդ դեպքում հիվանդը մահանում է վնչ թե հանկարծակի, այլ ձայնը նախ խռպոտվում է և ապա իսպառ չքանում: Իվանդը հուղված դուրսթյան մեջ է լինում, վրան քրտինք է գալիս, յերեխաների մոտ ցնցում է առաջանում, ապա վրա յե հասնում շնչահեղձանքը: Այսպես է լինում պատկերը, յերբ ասկարիդը շնչողիններն է թափանցում: այդ կարող է պատահել միանգամայն հանկարծ, յերբեմն քնած ժամանակ, լիովին բարեհաջող պայմաններում: Չափազանց կարևոր է նախա-

պես արտորոշել ասկարիդային շնչահեղձանքը: Բայց դա հեշտ բան չէ, ուստի այս դեպքում շատ կարևոր է մոր ոգնությունը. յեթե նա հայտնի, վոր դրանից քիչ առաջ յերեխան վորդ է դուրս թափել, ապա կարելի կլինի արտորոշել հիվանդությունը և յեթե ոգնությունը հասնի ժամանակին, յերբեմն բարեհաջող յելքի վրա հույս ունենալ:

Մի բժիշկ դիտել է հազվագյուտ դեպք, վոր պատահել է մի 4 տարեկան յերեխայի: Յերեխայի փսխելու ժամանակ, ասկարիդը մտնում է նրա քիթը, իսկ այնտեղից արտասվա-քթային անցքով թափանցում է աչքն ու նրա կողքից դուրս ցցվում:

Ահագին վրաս են հասցնում ասկարիդները նաև նրանով, վոր նրանց թրթուրներն աղիքներից արյունն են թափանցում, իսկ արյունից՝ թոքերը: Ճանապարհին նրանք խոցոտում են աղիքների պատերի լորձաթաղանթը. այդ խոցերի մեջ կարող են ընկնել վորովայնատիֆի, արյունոտ փորլուծի միկ-

րոքներ: Թոքերի լորձաթաղանթի վերքերում կարող են ընկնել տուբերկուլոզի թոքերի բորբոքման միկրոօրգանիզմներ:

Այսպես, ուրեմն; ասկարիդի թրթուրների շնորհիվ կարող են առաջանալ նաև ուրիշ հիվանդություններ:

Թափառաշրջիկ թրթուրներից հիվանդանում են նույնպես յերիկամուռները:

Յերեխաների վարակումն ասկարիդով առաջանում է այն ձվերից, վորոնք տարածվում են մարդկանց ու կենդանիների կղկղանքների հետ:

Ուրեմն ասկարիդների տարածման գըլխավոր աղբյուրը մարդկանց և ընտանի կենդանիների կղկղանքն է: Չվերն ամենահեշտ կերպով կարող են մանել մարդու մեջ հավանորեն անմիջապես հողի միջից, յերբ մարդ մոտիկ շփում է ունենում հողի հետ (բանջարանոցի և հողային աշխատանքներ հասակավորների համար, խաղեր հողի վրա և հողով յերեխաների համար): Շատ ան-

գամ վարակման աղբյուր են լինում բանջարանոցները, վորովհետև նրանք հաճախ ծառայում են վորպես արաթորության, «դուրս գալու» տեղ: Բացի դրանից, բանջարանոցները սովորաբար գոմաղբով են պարարտացնում: Այս բոլորն այն հետևանքը կարող է ունենալ, վոր ցած, այսինքն գետնի յերեսին բուսած բանջարեղենները կարող են յերբեմն կեղտոտված լինել վորդերի ձվերով: հետևաբար, յեթե բանջարեղենը հում կամ չլվացած ուտվի, վարակում կառաջանա: Վոչ միայն գյուղերում, այլ հաճախ նաև մեզ մոտ՝ քաղաքում անկուլտուրական ծնողները չլվացած բանջարեղեն են տալիս յերեխաներին: Վարակման աղբյուր է նմանապես կղկղանքներով ապականված ջուրը, մինչդեռ շատ մայրեր յերեխաներին հում ջուր են տալիս խմելու: Նույնպես դեռ ամենքը չեն հասկանում, վոր ճանձերն ու տարականները կարող են վարակը տեղից-տեղ փոխադրել, ու չեն աշխատում այնպես անել,

վորպեսզի սննդամթերքները կեղտոտություն-  
նից պահպանված լինեն:

Ավելի հեշտությամբ կարող են վարակվել  
յերեխաները, վորովհետև նրանք փորսող են  
անուամ հատակին, խաղում են գետնի վրա  
ու փորվորում են այն: Հաճախ պատահում  
է, վոր գետնից վերցնում են ընկած ուտե-  
լիքի մի կտոր, դնում են բերանն ու այս-  
պիսով վարակվում են: Ներսն էլ, այսինքն  
տներում, նույնպես հնարավոր է վարակվելը,  
վորովհետև վարակը կարող է ներս բերվել  
կեղտոտված առարկաներով, կոշիկով և այլն,  
մանավանդ արտաքնոց, բանջարանոց և այլ  
տեղեր գնալուց հետո:

Վորդերի և մասնավորապես ասկարիդների  
առկայությունը յերեխաների մոտ հայա-  
բերելու գործում մեծ դեր է խաղալու մայ-  
րերի կամ յերեխաներին խնամողների զիտե-  
լու ընդունակությունը: Կարևորը միայն այն  
չէ, վոր նկատես այն խտանիչները, վորոնք  
թելադրելին մտածելու, թե յերեխան վա-

րակված է, այլ այն, վոր անհրաժեշտ է  
ստուգելու այդ հանգամանքը և ամենայն  
խնամքով հետազննել յերեխայի կղկղանքը:  
Ասկարիդները խոշոր վորդեր են և ամենևին  
դժվար չեն նրանց նկատելու: Յեթե կղկղանքի  
մեջ չհաջողվի գտնել վորդին, պետք է ստու-  
գել և իմանալ՝ վորդի ձվեր չկան արդյոք  
կղկղանքում: Դրա համար անհրաժեշտ է  
հավաքել կղկղանքը և ամբողջից վերցնել  
մի-մի կտոր զանազան տեղերից ու տանել  
լաբորատորիա հետազոտման համար:

Վերևում մենք տեսանք, վոր վարակվե-  
լու նպաստող չափազանց շատ հնարավո-  
րություններով են շրջապատված հասակա-  
վորները և մանավանդ յերեխաները, յեթե  
սրանք զրկված են բավականաչափ զխտակ-  
ցական և ուշադիր խնամքից:

Փորի վորդերի դեմ պայքարելու միջոց-  
ներն են՝ առանձին վայրերի սանիտարական  
բարեկարգ վիճակն ու այն բուժական միջո-  
ցառումները, վորոնք ծառայում են վորդերի

արտաթափմանը: Այս զեպքում մոր զերը  
մեծ չե. նա պետք է հոգ տանի միայն այն  
մասին, վոր յերեխայի մարմնից դուրս յե-  
կած վորզերն զեսուղեն չթափվեն, այլ այր-  
վեն: Անհրաժեշտ է կեղտոտությունից պահ-  
պանել ջրամատակարարման համար ծառա-  
յող ավազանները: Ինչ վերաբերում է վոր-  
զերից վարակվելու զեպքերի կանխմանը,  
ապա մայրը հնարավորություն ունի վա-  
րակման բազմաթիվ ու բազմատեսակ աղ-  
բյուրները նվազեցնել՝ գործադրելով հետևյալ  
միջոցները.

1. խնամքով լվանալ թե՛ իր և թե՛ յերե-  
խայի ձեռքերը, մանավանդ ուտելուց առաջ.
2. թույլ չտալ, վոր յերեխաները փորսող  
անեն հատակի ու զետնի վրա, մանավանդ  
ձեռքերում հացի կտոր կամ այլ ուտելիք  
քանած.
3. յերեխաների ձեռքը չտալ վատ լվա-  
ցած բանջարեղեն, մրգեղեն.
4. խմելու համար հում ջուր չտալ.

5. թույլ չտալ, վոր յերեխան յեղունդ-  
ները կրծի, մատերը ծծի.

6. արտաքնոցներում թուղթ գործածել.

7. արտաքնոցներն ախտահանել՝ հատա-  
կին շաղ տալով և պատերը լվանալով 10  
տոկոսանոց կարբոլյան լուծույթով:

Այս միջոցառումները կիրառելով կարելի  
է հուսալ, վոր յերեխաները նախապահպան-  
ված են վարակվելուց:

Ինչ վերաբերում է ասկարիդով վարակ-  
ված հիվանդի բուժմանը, ապա պետք է  
ասել, վոր բուժումը կարելի յե սկսել մի-  
այն այն ժամանակ, յերբ հիվանդությունն  
արդեն ախտորոշված, հաստատված է:

Յեվ թեև բուժումը կարգավորողը բժիշկն  
է, բայց նրան անցկացնողը պետք է մայրը  
լինի: Հետևաբար մայրը պատրաստականու-  
թյուն պիտի ունենա. բուժումը կանոնավոր  
կերպով և խնամքով առաջ տանելու, ուստի  
և հարկավոր ենք համարում մի քանի ցու-  
ցումներ տալ նրան:



Աղիքների ասկարիզով հիվանդությունը բուժվում է հակասկարիզային հատուկ դեղով՝ սանտոնինով (վորդահալած միջոց) կամ նրա հում բնամթերքով՝ հնդիկ ոշինդրի սերմով:

Բայց չպետք է մոռանալ, վոր միանվագ բուժմամբ բոլոր վորդերը դուրս չեն թափվում. դրա համար յերբեմն հարկավոր է լինում բուժադարմանը կրկնել (վորոշ ժամանակ անցնելուց հետո): Բացի դրանից, պետք նկատի ունենալ, վոր սանտոնինն իսկապես ասկարիդներին դուրս չի թափում և ամեն անգամ չի յել սպանում նրանց, այլ միայն շմեցնում է, ուստի և սանտոնինից հետո հիվանդին տալիս են նաև լուծողական:

Առանձնապես պետք է ուշադիր լինել լուծողականի հարցին. մեզ հայտնի յե, վոր քանի դեռ ասկարիդները կենդանի յեն, նրանց արտադատած թյունն աննշան է, իսկ յերբ ասկարիդն սպանվի հակավորդային դե-

ղերով և որգանիզմից դուրս չհանվի, նա կենթարկվի քայքայման, և նրա մեջ գտնույած ամբողջ թույնը կտարածվի հիվանդի հյուսվածքներում ու կներծծվի, վորի հետևանքը կլինի հիվանդի շեշտակի վատացումը և նույնիսկ մահը:

Հավանորեն, այն միջանի դեպքերում, յերբ հիվանդի վարակումը վերագրում են սանտոնինին, իրոք վարակումը տեղի յե ունեցել ասկարիդի թույնով: Նկատի առնելով այս հանգամանքը, մայրերին հանձնարարում ենք հատուկ ուշադրություն նվիրել սանտոնինից հետո լուծողական տալու հարցին և հետեւել նրա ներգործմանը: Իսկ յեթե յերեսայի առողջական վիճակը հանկարծ վատանա, սկսի փսխել, մարմինն ել դուրս տա, այդ դեպքում անհրաժեշտ է նորից լուծողական տալ: Առհասարակ նպատակահարմար է առաջին լուծողականից 1—2 որ անցած տալ յերկրորդ լուծողականը, վորովհետև սանտոնին խմելուց հետո ասկարիդ-

ները դուրս են գալիս վաչ միայն փորն առաջին անգամ լուծելու հետ, այլ յերբեմն 3—4 օրվա ընթացքում:


### ՄՐԱՏՈՒՑ ՎՈՐԴԵՐ (ՊԻՏՈՒԿՆԵՐ)

Մրատուտ վորդերով վարակվածների թիվը չափազանց մեծ է. վնասն մեծ են յերեսխաներն, այնքան շատ է նրանց մեջ վարակվածների թիվը, վոր հասնում է 25—100<sup>0</sup>/0-ի: Հասակավորները վարակված են 80—85<sup>0</sup>/0-ով: Պիտուկները (օստրիցա) ամենատարածված վորդերն են. նրանք պատահում են աշխարհիս ամեն մասերում և բոլոր ժողովրդների մոտ:

Պիտուկները փոքրիկ, հազիվ նկատելի վորդեր են. նրանք ապրում են նեղ աղիքները յետևի մասում, հաստաղիքների վերևի մասում և վորդաձև լոստում: Այստեղ է անցկացնում իր կյանքը մակաբույժը. այստեղ է նա զարգանում և հասնում սեռական հա-

սունություն. այստեղ են ապրում նրանց և՛ վորձերը և՛ եգերը: Իսկ ուղիղ աղիքները յետևի մասում ապրում են միայն եգերը, վորոնք իջնում են ներքև՝ ուղիղ աղիքից դուրս գալու և ձու ածելու համար: Սրբանի (հետույքի անցքի)

չորս կողմի խոնավության պակասությունն արագացնում է ձու ածելու շրջանը, վորի հետևանքով վորդերը չորանում են: Միջին հաշվով՝ ձու ածելու պրոցեսը (ընթացքը) 15—20



Մրատուտ վորդեր

րոպեյից վերջանում է, և եզը վոչնչանում է: Իսկ յեթե սրբանի մակերեսը թաց է, կենդանի վորդերին տեսնել կարելի յե նաև ուղիղ աղիքից դուրս գալուց 45 րոպե անցնելուց հետո:

Պիտուկների գոյության ամենասովորական  
և բնորոշ նշաններն են այն յերևույթները,  
վոր առաջացնում են սրբանից (հետույքի  
անցքից) դուրս յեկած եզերը:

Եգ պիտուկները դուրս են սողում՝ յերե-  
խայի անկողին պառկելուց սովորաբար 2 ժամ  
հետո. դուրս ընկած եզերը սոսկալի քոր են  
պատճառում, իսկ ուղիղ աղիքում մի տե-  
սակ այրող ցավ է զգացվում: Սրանց թիվը  
յերբեմն խիստ շատ է լինում: Մի գիտնա-  
կան կարողացել է գիտել սրբանի չորս կողմը  
սողացող 30—40 եգ վորդեր: Այսպիսի քո-  
րից յերեխաները չափազանց տանջվում են,  
հաճախ անկարող են լինում քնելու. քնած  
ժամանակ ել շատ անհանգիստ են լինում և  
հանկարծակի զարթնում են: Քորը յերբեմն  
կարող է տեվել մի ամբողջ որ և գիշեր:  
Հետույքի անցքը դիտելիս, կարելի յե հեշ-  
տությամբ, համոզվել վոր այս անախորժ գզա-  
ցումները պատճառողները սրատուտ վորդերն  
են կամ նրանց առաջացրած ձեվափոխում-

ները, վորոնք հետևյալ պատկերն են ներ-  
կայացնում. ուղիղ աղիքի յեզրերը, նման  
դեպքերում, կարմրած և ուռած են լինում,  
աղիքի յերեսին նկատվում են կետանման  
կարմրագույն բծիկներ, վորոնք հետեվանք  
են պիտուկների կրկնվող «ծակոտումների»:

Յերբեմն նկատվում է, վոր եզերի մաս-  
սայաբար դուրս գալը կրկնվում է վորոշ  
ժամանակի ընդմիջումներով. նրանք դուրս  
են գալիս ամեն ամիս, մոտավորապես միև-  
նույն թվերին: Յերբեմն ել նկատվում է  
վորոշ կապ՝ այս կամ այն սնունդն ընդու-  
նելու և եզերի դուրս գալուն մեջ (միքանի  
տեսակ մրգեր, բանջարեղեններ, թեյ, սուրճ  
և այլն):

Տանջալից քորը, անքնությունը գրգռա-  
կանություն են առաջացնում. յերեխաները  
զառնում են ներվային, քմահաճ:

Պիտուկները շատ շարժունակ են, հեշտու-  
թյամբ խոցում են աղիքների պատերը, մրտ-  
նում են կույրաղիքը և բորբոքում են առա-

Ղացնում այնտեղ: Յերբեմն ել նրանք մըտնում են աղջիկների սեռական անցքը, հեշտանքը, զրգիւ են պատճառում և առաջացնում են այդ որգանների բորբոքումն: Այսպես, հինգ տարեկան մի աղջկա հետազոտումից, վոր հիվանդ եր սրատուտ վորդերի պատճառով, հայտնվեց, վոր նրա սեռական մասերի չորս կողմի կաշին և լորձաթաղանթը շատ զրգոված են, ընդվորում հեշտոցն առատորեն արտազատում է թափանցիկ մի հեղանյութ: Վեներական ախտի ուղղությամբ (սուսանակ) արված հետազոտումը բացասական արդյունք տվեց: Պիտուկների դեմ համապատասխան բուժական միջոցառումների գործադրումից ամիսներ անցած, բոլոր յերևույթներն անհայտացան:

Սեռական մասերի մշտական զրգուման հետևանքով, պիտուկներով վարակված յերեխաների մեջ զարգանում է անանիզմով (ձեռնաշարժություն) պարապելու վնասակար սովորությունը:

Արդեն ասացինք, վոր ասկարիդների ձվերը պետք է 2—3 շաբաթ հասունանան հողի մեջ. այս ժամանակն անցնելուց հետո միայն նրանք կարող են մարդու մարմնում չափահաս վորդեր դառնալ: Հետևաբար մարդինքն իրենից ասկարիդով վարակվել չի կարող: Բոլորովին այլ է վիճակը սրատուտ վորդերի նկատմամբ: Յեթե սրանց ձվերը կուլ տրվեն արտաթափվելուց իսկույն հետո, այդ ձվերը, փորոտիքում զարգանալով, հասունանում են ու չափահաս վորդեր են դառնում:

Սրբանը քորելիս՝ յերեխաները կեղտոտում են իրենց ձեռքերը և բերանը տանում վորդերի ձվերը: Այսպիսով տեղի յե ունենում ինքնավարակում: Այսորինակ մշտական ինքնավարակում առաջացնելով, սրատուտները յերեխաներին պատճառում են մի հիվանդություն, վորը վորդային հիվանդությունների մեջ ամենահամառն ու յերկարատևն է:

Ինչպես տեսնում ենք, վարակվելու գըլ-  
խավոր աղբյուրն է ինքը՝ սրատուտ վորդերի  
կրողը. նա յե, վոր տարածում է վարակը  
և ամեն ուղիներով փոխադրում է այն ու-  
րիշներին: Վարակի տարածման գլխավոր  
միջոցներից մեկը հիվանդների ձեռքերն են,  
մանավանդ յերեխաներինը, վորոնք սրա-  
տուտների կրող են հանդիսանում:

Վոչվոր չի կարող նախապահպանել իրեն  
վարակվելուց, յեթե նա նույնիսկ շատ հե-  
ռավոր շփում է ունեցել սրատուտ վորդերի  
կրողների հետ, թեկուզ ամենայն խնամքով  
պահպանած լինի անձնական հիգիենայի  
(առողջապահական) կանոնները: Չեռք սեղ-  
մելը, զանազան առարկաների ընդհանուր  
գործածումը, յերեխաների խաղալիքները,  
արտաքնոցների, ինչպես և բնակելի տների  
ու հանրային կացարանների դռան բռնա-  
տեղերին ձեռք դիպցնելը,—այս բոլորը կա-  
րող է նշանակություն ունենալ պիտուկնե-  
րով վարակվելու համար:

Հաճախ վարակման աղբյուր կարող են  
գառնալ նաև այն ամեն մանգամթերքները,  
վորոնք կեղտոտված են պիտուկների ձվերով:  
Այս տեսակետից մեծագույն չարիք է  
ներկայացնում մթերքների մանրածախ վա-  
ճառումը բաց, անբարեկարգ քիսկներում,  
սայլերի վրա, թաբախով, ինչպես նաև սննդ-  
դեղենի վաճառքը ձեռքի վրա (բուլիի հաց,  
«իրիս»), թղթի մեջ չփաթաթած կոնֆեկտ-  
ներ և այլն):

Վարակի տարածման գործում դեր է խա-  
ղում նաև փոշին: Այսպես, դպրոցական հա-  
տակների, նստարանների փոշին հետազոտե-  
լիս, գտնում եյին ձվեր, ընդվորում ձմեռը՝  
մի քանի հատ, իսկ ամառը՝ շատ ավելի մեծ  
քանակությամբ: Սեղոնային այսպիսի տար-  
բերությունը բացատրվում է նրանով, վոր  
ձմեռները յերեխաները ավելի հիմնովին են  
հագնվում. աղջիկներն իրենց վարտիքների  
ծայրերը տեղավորում են բարձրավիզ գուլ-  
պաների մեջ, վորի շնորհիվ վորդերի ձվերը

հատակին չեն թափվում, ինչպես այդ լինում է տարվա տաք յեղանակներին:

Փոշու միջոցով վարակումը լինում է վոչ միայն այն ժամանակ, յերբ բերանով և քթով ներս ենք քաշում փոշին և ապա կուլ ենք տալիս նրան՝ մեջը գտնված ձվերի հետ, այլև այն ժամանակ, յերբ ձվերը փոշու հետ միասին նստած են լինում սննդամթերքների ու տնային պատկանելիքների վրա ու վերջին հաշվով ընկնում են մարդու փորոսիքը:

Նկատի առնելով այն դժվարությունները, վորոնք ծառանում են հակավորդային միջոցառումները գործնականապես կիրառելու ժամանակ, սրատուտների դեմ պայքարին անհրաժեշտ են երգրավել բնակչության ամենալայն շերտերը: Այս գործին պետք է ներգրավել նաև մատաղ սերնդի մասնակցությունը՝ հանձին կազմակերպված մանկական խմբերի:

Վարակումը կանխելու միջոցառումները պետք է հանդեն այն բանին, վորպեսզի մեզ

և մեր յերեխաներին պահպանենք վարակման հնարավորությունից: Դրա համար նպատակահարմար ենք համարում հետևյալ միջոցառումները հանձնարարել. չափազանց կարեւոր է ամեն բանի մեջ խիստ մաքրություն պահպանել, հետևաբար պետք է՝ 1) վորքան կարելի յե հաճախ լվանալ ձեռքերը. 2) ձեռքերը չլվացած ուտելու չնստել. 3) յեղունգները չկրծել, 4) բարևել առանց ձեռք սեղմելու. 5) շուտ-շուտ և վորքան կարելի յե կարճ կտրել յեղունգները. 6) արտաքնոցի համար թուղթ գործածել. յեթե յերեխան պիտուկ վորդ ունի, ապա անթուլյատրելի յե թղթի փոխարեն միկնույն լաթը գործածել մի բանի որվա համար, վորովհետև այս ձևով յերեխայի վարակումը կրկնվում է. 7) արտաքնոց գնալուց հետո ձեռները լվանալ. 8) գիշերվա անոթները բնդհանուրի գործածության համար չլինեն. 9) արտաքնոցներում պահպանել սանիտարական պայմանները:

Պետք է ամենախիստ կերպով պայքարել յերեխաների՝ մատ ծծելու սովորութեան դեմ, դիմելով նույնիսկ այնպիսի միջոցների, ինչպէս մատներին դառը կամ կծու նյութեր քսելն է:

Կրկնվող վարակումը կանխելու նպատակով կարելի յե հանձնարարել հետևյալը.

1) Նախապաշտպանման հոգնա անել: Պիտուկ վորդով հիվանդներին խորհուրդ ենք տալիս քնելուց առաջ թեթե հոգնա դնել, վորպէսզի ուղիղ աղիքն ազատվի գերահահատունացած եգերից և թույլ չտա նրանց գիշերով դուրս գալուն ու դրանով քոր առաջ բերելուն:

2. Տաք սապոնաջրով լվանալ սրբանը և հետույքի չորս կողմը՝ մաքրելու համար այն մասերն, ուր պիտուկները ձվեր են ածում:

3. Վտտաշոր հագնել վոչ միայն ցերեկներն, այլև գիշերները, վորպէսզի հետույքը քորելիս՝ յեղունգները մակաբույծի ձվերով չկեղտոտվեն և ձվերի թափթիման առաջն

առնվի: Վտտաշորերը պետք է ամեն ոք փոխվեն և յեռացվեն:

4. Հիվանդներին լվանալուց, նրանց հոգնա դնելուց ու ձերմակեղենները հավաքելուց հետո, հիվանդներին սպասարկող բոլոր անձինք անհրաժեշտաբար պետք է հիմնովին լվանան ձեռքերը տաք ջրով, սապոնով և խոզանակով:

Նախագգուշական հանրային միջոցառումներն են՝ հսկել մթերքներին, չկեղտոտել հողերը և բուժական միջոցներով մասսայապես բնաջինջ չանել վորդերին:

Սրատուտ վորդեր ունեցող հիվանդներին բուժելու համար կան մի շարք դեղեր՝ տիմոլ, նաֆթալին, ածխածխածնային բիսմութ և այլն: Սակայն բուժման անհաջողութիւնը, վորն այնքան հաճախ վշտացնում է շատերին, արդյունք է վոչ թե վստահելի դեղերի չգոյութեան, այլ բացառապէս վարակումները կրկնվելու հեշտութեան: Դրա համար, տևական և խնամքով բուժման ժամանակ,


մոր ամբողջ ուշադրութիւնը պետք է ուղղված լինի նաև կրկնվող ինքնավարակման հնարավորութիւնը վերացնելուն:

## ՄԱԶՈՐԴԸ

Յեթն ասկարիդները վիճակված են առավելապես գյուղական բնակչութեան համար, ապա մազորիդները, ընդհակառակը, ավելի հաճախ հարվածում են քաղաքի բնակիչներին, ընդվորում, հակառակ ասկարիդներին, նրանցով ավելի շատ հիվանդանում են հասակավորները, քան թե յերեխաները: ՀՍԽՄ-ի գանազան վայրերում մազորիդով հիվանդների թիվը տարուբերվում է 5% — 95%-ի սահմաններում: Մոսկվայում հասակավորների թիվը 28% է, յերեխաներինը՝ 18%: Ռուստովում դպրոցականների հետազոտման արդյունքն է 30%:

Մազորիդը պատկանում է կլոր վորդերի տեսակին: Նույնքան փոքր է, ինչպես և

սրատուտը: Այս անունը նա ստացել է նրա համար, վոր մարմնի վերին մասը մազի նման յերկար է ու բարակ, իսկ ստորին մասը հաստ է ու մտրակի կոթի յե նման, ուստի նրան կոչում են նաև մտրակաձև:



Մազորիդ

Մազորիդը գլխավորապես ապրում է կույր աղիքում, մտնելով նաև վորդանման վոստը: Մազորիդը զարգանում է առանց միջակատիրոջ: Սրա ձվերը դուրս են ընկնում կրկողանքի հետ: Արտաքին միջավայրում, Յելսիով 28 — 30<sup>0</sup> շերմաստիճանում, մազորիդի



ձվերում զարգանում են թրթուրները, և ձուն 28 օրից հետո վարակիչ է դառնում մարդու համար: Մազորդի զարգացած թրթուրները կարող են միջանի ամիս կենդանի մնալ ձվի թաղանթում: Մարդու կուլ տված մազորդի ձվերը պատուվում են, և միջից դուրս յեկած թրթուրները բնակութուն են հաստատում տիրոջ որգանիզմում առանց թափառելու: Մազորդը իր մարմնի գլխային մասով խրվում է աղիքի լորձաթաղանթում և, ըստ յերևույթին, արյունով է սնվում: Վորովհետև նա պինդ կերպով ամրացրած է իր տեղում, ուստի և մարդու կղկղանքի մեջ չի յերևում: Այդ իսկ պատճառով նրա դուրս վանումը զժվարությամբ է գլուխ գալիս:

Մազորդի պատճառած հիվանդագին յերեվույթներից հարկավոր է նշել վորդաձև վոստի և կուլյ աղիքի բորբոքումը: Խորը թափանցելով փորոտիքի պատերում, մակաբույծն այսպիսով մուտք է բաց անում մարմնի ներսն անցնելու նաև միկրոբներին,

վորոնք միշտ լինում են աղիքների ծոցում: Բակտերիաների թափանցումն աղիքների հյուսվածքներում կարող է բազմապիսի հիվանդություններ առաջացնել:

Մազորդի արտադատած թույները ներծրծվում են արյան մեջ և փասակար ներգործություն են անում որգանիզմի վրա, ներգործություն, վորն արտահայտվում է մերթ սակավարյունությամբ, մերթ մարսողական գործողությունների խանգարումով և մերթ ներվային բնույթ կրող հիվանդություններով: Հետևաբար, յուրաքանչյուր ստամոքսային-աղիքային հիվանդություն ունեցողն, ինչպես և թուլությունից և սակավարյունությունից գանգատվող հիվանդները, պետք է այն մտածմունքն ունենան, թե այստեղ նրանք դործ ունեն մազորդի հետ և անհրաժեշտ է, վոր հետազոտման յենթարկվեն: Հիվանդությունը կարող է համարվել լատորոշված, յեթե մակաբույծի ձուն դրսեվորվել է կղկղանքում:

Մագորդի դեմ, վորպես բուժական միջոց,  
գործ եւ անվում տրամուր: Բուժումը տևում  
ե 1 — 1<sup>1</sup>/<sub>2</sub> ամիս:

Բուժման հաջող յեղքին իբր ապացույց  
հանդիսանում ե ձվերի անհայտացումը կըղ-  
կըղանքի միջից:

### ՅԵՐԻՋԱԿՆԵՐԸ ԿԱՄ ՏԱՓԱԿ ՎՈՐԴԵՐԸ

Յերիգակները յերկարավուն, սպիտակ  
գույնի, տափակ վորդեր են: Այս վորդը  
կազմված ե շատ փոքրիկ գլխից և բազմա-  
թիվ առանձին հատվածներից, վորոնք ձվե-  
րով են լցված:

Այս յերկարավուն, տափակ ձևի վորդերն —  
այսպես կոչված սոլիտերներն են՝ խոզի,  
յեղան և ձկան վորդերը: Արդեն անունից  
պարզ ե, վոր մարդիկ սոլիտերով վարակ-  
վում են կենդանիներից՝ խոզից, յեզնից  
կամ կովից ու ձկնից:

Յերիգակը պարզանում ե այլ կերպ, բան

կլոր վորդերը: Նրա ձուն հասունանում ե  
վոչ թե հողում, այլ վորոշ կենդանու մեջ  
(խոզ, յեղջյուրավոր անասուն և այլն) —  
այսպես կոչված «միջակա տիրոջ» (միջնորդի)  
մեջ: Միջակա տիրոջ մարմնում ձուն հաս-  
նում ու դառնում ե ֆինն կոչվող սաղմ:  
Յերբ մարդիկ կուլ տան ֆինն կոչվող  
սաղմը, այս վերջինը զարգանում ու դառ-  
նում ե հասուն վորդ, այսինքն սոլիտեր:  
Կենդանիները սոլիտերով վարակվում են  
մարդկային կղկղանքով, իսկ յերեխաները —  
յերբ ուտեն նույն կենդանիների վոչ լավ  
տապակած միսը: Յերեխաների մոտ յերի-  
գակները պատանում են ավելի սակավ, քան  
կլոր վորդերը:

### ԽՈՋԻ ՍՈԼԻՏԵՐԸ ԿԱՄ ԿԵՌԻԿԱՎՈՐ ՎՈՐԴԸ

Յերեխաներն այնքան հաճախ չեն հիվան-  
դանում խոզի սոլիտերով: Այս վորդը լայնու-  
րեն ծավալված ե մանավանդ այն վայրե-

րում, ուր ավելի շատ է զարգացած խոզաբուծութիւնը:

Սոգի սողիտերը մի տափակաձև, սպիտակ գույնի վորդ է, 4 — 5 մետր յերկարութեամբ: Նրա ամբողջ մարմինը կազմված է հատ-հատ փոքրիկ անդամներից: Նրա մարմնի առաջակողմի ծայրին գտնվում են 4 հատ ծծակներ, վորոնցով նա պինդ կպած է աղիքի պատերին: Այս ծծակավոր կեռիկների համար է, վոր նրան կոչում են զինված վորդ: Հասուն վորդն ապրում է միայն մարդու աղիքներում: Սակայն այս մակաբույծի թրթուրն ամենից հաճախ ապրում է խոզերի մկաններում, իսկ մարդու, շան և կատվի մեջ շատ քիչ է պատահում: Զինված վորդի ձվերը ցրվում են մարդու կղկղանքի հետ, վորը պատահաբար ուտում են ամեն տեսակ կենդանիներ, բայց այդ ձվերը զարգանում են միայն խոզի փորում: Այստեղ նրանց ձվի թաղանթը լուծվում է, իսկ բուն ձուն արյան հոսանքով աղիքներից մկաններն է տար-

վում, ուր և դառնում է թրթուր, վոր կոչվում է ֆինն (բշտիկաձև վորդ): Սրանց արդեն կարելի յե տեսնել հասարակ աչքով իբրև սպիտակ բշտիկներ, վորոնք սիսեռի են նման:

Սողիտերի այդ ֆինները մակաբույծներ են, վորոնք ապրում են մարմնի հյուսվածքներում և դուրս չեն գալիս միջակա տիրոջ մարմնից: Բացի խոզից, վոր առաջնակարգ նշանակութիւն ունի, կեռիկավոր վորդի ֆինները կարող են զարգանալ նաև վարազի, շան, կատվի և նույնիսկ մարդու որգանիքում: Այսպիսով մարդն ել կարող է խոզի սողիտերի «միջակատերը» դառնալ:

Սողիտերի ձվերը մարդս կարող է կուտալ կղկղանքով ապականված ջրի հետ, ինչպես և բանջարեղենի կամ այլ սննդեղենի հետ, վորոնց վրա պատահաբար կարող են հասած լինել նրանք: Մարդը, վոր այդ զինված վորդի կրողն է հանդիսանում, անմաքրութեան հետևանքով կարող է ինքն իրեն վարակել, յեթե ձվով կեղտոտած ձեռքերը

բերանը տանի ու կուլ տա ձուռն: Կուլ տըր-  
ված ձվերը մարդու ստամոքսում նույն գոր-  
ծողութիւնն են կատարում, ինչպիսիք և խոզի  
մեջ: Նրանցից դուրս են գալիս սաղմեր, վո-  
րոնք թափառում են մարմնում և հաստատ-

վում են նրա զանազան մա-  
սերում, ուր այդ սաղմերից  
սովորական կարգով ֆինններ  
են զարգանում:



Սուրտերի գուրը:

Սուրտերը կարող է ծանր  
տեսակի սակավարյունու-  
թիւնն առաջացնել: Բացի  
դրանից, նա իր կեռիկներով  
ամուր ճանկում է աղիքի  
պատերը և վերքեր պատճառում: Հիվան-  
դութիւնը ճանաչվում է այն ժամանակ, յերբ  
կղկղանքի մեջ գտնվեն նրա փոքրիկ հատ-  
վածիկները կամ ձվերը:

Խոզի սուրտերը դժվար է բուժվում, վո-  
րովհետև, թեև յերբեմն հաջողվում է աղի-  
քից դուրս քշել ահագին վորդին իր ամբող-


ջությամբ, բայց փոքրիկ, հազիվ տեսանելի  
գլխիկը մնում է, և նրանից շուտով սկսում  
է զարգանալ նոր վորդ, վորը միքանի ամ-  
սից դառնում է մի մեծ մակաբույժ: Սուր-  
տերը դուրս է քշվում հատուկ դեղով, վոր  
պատրաստվում է արվական ձարխոտ աս-  
ված բույսից (պապորոտնիկ):

Վորպեսզի ավելի լավ դուրս քշվի սուր-  
տերը, հանձնարարվում է գիշերանոթի մեջ  
տաք ջուր ածել, վորովհետև վորդը տաք  
աղիքի միջից չի ուզում դուրս գալ դեպի  
ցուրտը: Ընդվորում դուրս յեկող վորդին  
չպետք է ձեռքով քաշել, վորովհետև կարող  
են հատվածիկները կտրվել, և այն ժամանակ  
նա, ինչպես արդեն ասել ենք, նորից կզար-  
գանա ու մեծ վորդ կդառնա:

Ինչպես նախապահպանվել վարակումից:  
Յերեխաներին վատ տապակած կամ խորո-  
ված խոզի միս չտալ: Գնել այն միսը, վոր  
անցել է անասնաբուժական-սանիտարական  
կոնտրոլից

## ՅԵԶԱՆ ՍՈՒԽՏԵՐ

Այս մակաբույծի տարածումը կախված է «միջակա տերերի» առկայությունից, մարդու միջոցով նրանց վարակվելու հնարավորությունից և միսը պատրաստելու յեղանակից: Միքանի տեղերում վարակումը 54%-ի յե հասնում:



Սուլիտեր (զինված կեռիկավորը):

Յեզան սուլիտերը շատ նման է խոզիին, միայն սրա գլխի վրա կեռիկներ չկան, այլ կան միմիայն 4 հատ մեծ ծծակներ: Տարբերվում է նաև նրանով, վոր վորզի միջից դուրս յեկած ձվերն իրենց զարգացումն առաջ են տանում յեղջերավոր անասուններին:

մսի մեջ և վոչ խոզի մկաններում: Յերիզակաձև սուլիտերն ապրում է մարդու նեղ աղիքներում:

Յեզան սուլիտերի վնասակար ազդեցությունն որգանիզմի վրա ավելի քիչ է: Այս սուլիտերն առաջացնում է սակավարյունություն, գլխացավ և ուշաթափություն: Հիվանդը դառնում է նաև յղյուրագրգիռ և վատ է քնում:

Յերեխաները վարակվում են յեզան կամ կովի վարակված միսն ուտելուց: Յեզան սուլիտերի ֆիններն ավելի մանր են, քան թե խոզինը, ուստի և դժվարությամբ են տեսնվում:



Յեզան սուլիտերի գլուխը:

Յեթե կովին տանն են մորթում, պետք է լավ փնտռել ֆիններ նրա ծամելու մկաններում, ուր սովորաբար նրանք լինում են: Բուժադարմանը նույնն է, ինչվոր խոզի սուլիտերի ժամանակ՝ ձարխոտը: Յերեխաներին վարակումից զերծ պահելու համար


հանձնարարում ենք պահպանել նույն կանոնները, վորոնց մասին խոսել ենք խոզի սորխաերի առթիվ:

## ԼԱՅՆ ՅԵՐԻԶՈՐԴԸ, ԿԱՍ ԶԿԱՆ ՍՈՒՏԵՐԸ

Վորդերի այս տեսակը շատ չի պատահում: Մոսկվայում՝ 7,8%, Լենինգրադում՝ 8,9%, Կոստրոմայում՝ 16%, իսկ Արխանգելսկում՝ մինչև 50%: Տարածումը կախված է միջակ տերերի առկայությունից և սննդի տեսակից: Վարակումների մեծ թիվը այնտեղ է, ուր բնակչության սնունդը ձուկն է:

Այս յերիզորդի յերկարությունը 2-ից մինչև 9 մետր է: Սա ամենայերկար վորդն է: Նրա գլխին վոնչ կեռեր կան և վոնչ ծծակներ: Ամբողջ մարմինը կազմված է հատհատ, շատ լայն փոքրիկ հատվածներից: Ապրում է մարդու, շան և կատվի նեղ աղիքներում:

Լայն յերիզորդի զարգացումն այսպես է ընթանում. մակաբույժի ձվերը դուրս են թափվում տիրոջ կղկղանքի հետ միասին և կարող են ջուրն ընկնել կամ տարվել զանազան ջրամբարներ: Դուրս յեկած ձվերի սաղմը թերաճ է. նրա լիակատար աճման համար, վոր կարող է տեղի ունենալ միայն



Լայն յերիզորդ:

ջրում կամ ջրիկ կղկղանքում, պետք է 3 — 5 շաբաթ ժամանակ՝ նայած ջերմության աստիճանին: Չվից դուրս է գալիս արուևնունքներով ծածկված սաղմը: Արուևնունքների շնորհիվ նա լողում է ջրում. փոքրիկ խեցգետինները կլանում են այս սաղմերին, վորոնք սրանց մարմնում թրթուր են դառնում: Արդեն վարակված փոքրիկ խեցգետիններին յափում են ձկները, վորոնց փորոտի-

քում խեցգետին-կիկլոսները մարսվում են, իսկ վորդի ազատված սաղմերը ցրվում են ձկան գանազան որգաններում՝ լյարդում, մկաններում և այլն:

Ամենից շատ այս վորդերով վարակվում են գիշատիչ ձկները, ինչպես որինակ՝ գայ-  
լաձուկը, վորովհետև սրանք ուտում

են վոչ միայն խեցգետիններին, այլև մյուս ձկներին, վորոնք նույնպես կարող են վարակված լինել:

Չկան սողիտերը յերեխաների համար ամենավտանգավոր վորդերից մեկն է. նրա արտա-  
գատած թուլյան առաջացնում է չարորակ սակավարյունություն,

լայն  
յրեկորդի  
գլուխը:

ընդհանուր թուլություն, ծանրաշնչառու-  
թյուն (հեփոց) և ուրիշ ծանր խանգարումներ:

Հիվանդությունն ախտորոշվում է, յերբ կղկղանքում գտնվեն վորդի ձվերը կամ փոքրիկ հատվածիկները:

Բուժադարմանն է ճարխտար. բուժման

արդյունքն ստուգում են կղկղանքը հետա-  
զոտելու միջոցով: Յեթե գլխիկը դուրս է  
յեկել, նշանակում է լիովին հասել են նպա-  
տակին:

Վարակումը կանխելու միջոցառումներն  
են՝ ուտել միայն լավ խաշած կամ տապա-  
կած ձուկ. ձուկն անփաս դարձնելու համար  
պահել նրան սառցարանում յերկու շաբաթից  
վոչ պակաս:

## ԹՂՈՒԿԱՅԻՆ ԿԵՌԻԿԱՎՈՐ ՎՈՐԴԷ

Լայն յերիգորդի հետ համեմատած ան-  
նշան յերկարություն ունի թգուկային կե-  
ռիկավորը: Վորդի այս տեսակը բնորոշվում  
է նրանով, վոր մարդը նրա համար հանդի-  
սանում է և՛ միջակա տերը և՛ իսկական  
տերը: Վորդի զարգացման (թե թրթուրային  
և թե լիակատար հասունացման շրջանը)  
ամբողջ շրջանը հաջորդաբար անցնում է  
միևնույն մարդու մեջ:

Այս մակաբույժը յերկար ժամանակ հազ-  
վագյուտ եր համարվում մեր մոտ: Ներկա-  
յումս նա հանդիսանում է հասարակ վոր-  
դերից մեկը. սրանով հիվանդանում են  
ավելի փոքրերը, քան տարիքավորները: Մի-



Քրոնիկային կեռիկա-  
վորի գլուխը:

չին հաշվով յերեխաների  
մեջ նա տարածված է  
12,1%:

Քրոնիկային կեռիկա-  
վոր վորդն ունի գըն-  
դաձև գլուխ, վորի վրա  
կան 4 հատ կլորավուն  
ծծակներ, և դուրս քաշ-  
վող փոքրիկ կնճիթ, վոր  
կեռիկներով է պատած:

Այս վորդն ապրում է մարդու նեղ աղի-  
քում: Մակաբույժի ձվերից դուրս են գալիս  
ազամեր, վորոնք մանում են նեղ աղիքի ներքևի  
մասը և դառնում են ֆիլններ: Մի քանի ժա-  
մանակից թրթուրն ընկնում է աղիքի մեջ,  
ամրանում է նրա պատերին և դառնում է

յերիզավորդ: Կղկղանքի հետ դուրս թափված  
ձվերը յերեխաները կարող են կլանել ջուր խմե-  
լիս, չլվացած բանջարեղեն ուտելիս և այլն:

Հիվանդության նշանները շատ բազմատե-  
սակ են՝ ներվային հիվանդություն, անքնու-  
թյուն, ցավեր փորի մեջ, փորլուծություն՝  
յերբեմն փորկապություն, նիհարում: Հիվան-  
դությունն ախտորոշվում է, յերբ կղկղանքի  
մեջ ձվեր են գտնվում:

Հիվանդությունը բուժում են ձարխոտով,  
սագախոտով (թալ), տիմուլով: Անհրաժեշտ  
է նկատի ունենալ, վոր բուժական միջա-  
մտությունից ազդվում են միայն հասուն մա-  
կաբույժները, վորոնք և դուրս են քշվում:  
այսինչ աղիքի մազմզուկներում նստած  
թրթուրները մնում են անխախտ իրենց տե-  
ղում. սրանցից զարգանում են յերիզակների  
նոր խմբեր: Հետևաբար անհրաժեշտ է  $1\frac{1}{2}$  —  
2 շաբաթից կրկնել բժշկությունն, նմանա-  
պես նորից հոտազոտել կղկղանքը՝ ձվի առ-  
կայությունը վորոշելու համար:



Վարակման աղբյուր ե հանդիսանում այն մարդը, վոր տարածում ե այս վորդի ձվերը և դրանով կեղտոտում հողն ու ջուրը: Վարակումը կարող ե առաջանալ առողջի և հիվանդի մերձավոր հարաբերությունից:

Բացի դրանից, ձվերը կարող են կլանվել ուտելիքի հետ: Վերջապես կարևոր նշանակություն ունի նաև ինքնավարակումը, յերբ մարդ սեփական ձեռքերով բերանն ե տանում մակաբույժի արտապատած ձվերը: Բացառված չե վարակման հնարավորությունը նաև մեծ ու փոքր մկների միջոցով, վորոնք կարող են նույնիսկ վարակի կրողը լինել:

Վարակումը կանխելու համար անհրաժեշտ ե ուտելուց առաջ պահպանել հիգիենայի ընդհանուր կանոնները: Բացի դրանից, անհրաժեշտ ե յերեխաներին խնամել հիգիենական պայմաններում, պահպանել ջրերը, վոր չապականվեն, վոչնչացնել մեծ ու փոքր մկներին, պահպանել սննդամթերքները, վոր կրծողների թրիքներով չկեղտոտվեն:

## ԵՒԽՆՈՎՈՎ (ՊԱՐԿՎՈՐԴ)

Եխինոկոկը կամ պարկվորդը յերիզակներից ամենափոքրն ե և 5-6 միլիմետր յերկարություն ունի: Բարեբախտաբար նա սակավ ե պատահում յերեխաների մոտ: Այս վորդը յերեխաների մեջ ապրում ե վոչ թե հասուն վիճակում, այլ վորպես սաղմ, վոր-



Եխինոկոկ:

պես փամփշտավոր ֆինն: Հասուն վիճակում ապրում ե միայն շան աղիքներում: Յերեխաները նրանով վարակվում են շների հետ շփվելուց: Եխինոկոկով հիվանդ շներն իրենց կղկղանքի հետ գետնի վրա ցանցնում են այս պարազիտի ձվերը: Գետնի վրա չորեթիվ անելիս կամ շան հետ խաղալիս յերեխաները վարակվում են եխինոկոկով: Սա շատ վատ և նույնիսկ անբուժելի հիվանդու-

Թյունն եւ Այս վորդի սաղմը, փամփշտի ձե-  
վով, սովորաբար հաստատվում եւ լյարդում,  
Թոքերում, ավելի ցանցաւ՝ փայծաղում եւ  
վոսկրներում:



Փամփշտավոր ելեինոկոկը լյարդում:

Փամփշտի պատերը քանի գնում այնքան  
նոսրանում են եւ կարող են իրենք իրենց  
պատառվել. այդ դեպքում Թունավոր հե-

ղանյութը Թափվում եւ յերեխայի մարմնի  
ներսը, ու յերեխան մահանում եւ:

Հազիվ եւ պատահում, վոր ոպերացիան  
ոգնի, վորովհետեւ ելեինոկոկային ուռեցքը  
սաստիկ մեծանում եւ ու փռվում, այնպես  
վոր յերբեմն հասնում եւ կյանքի համար կա-  
րևոր այն որգաններին եւ, վորոնք չի կա-  
րելի կտրելով հեռացնել: Յերեխաներին այս  
հիվանդությունից պահպանելու համար, չը-  
պետք ե թույլ տալ, վոր նրանք շներին խրտ-  
տեն, համբուրեն, նրանց հետ մի ամանից  
ուտեն կամ միասին անկողին պառկեն. նմա-  
նապես անհրաժեշտ ե հետևել բնակարանի  
մաքրությանը. բացի դրանից ուտելուց առաջ  
միշտ պետք ե լավ լվանալ յերեխաների ձեռքը:

**ԿԵՆՅԱՂԱՅԻՆ ՏԱՐԲԵՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐԴՆԱՅԻՆ  
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ**

Կենցաղային վոր կողմն ել վերցնենք, կը-  
տեսնենք, վոր նա այսպես կամ այնպես

կապված է վորդնային հիվանդությունների հետ:

**Հողը.** Հողի մաքրությունը պահպանելուն ոտվորաբար հարկ յեղած ուշադրությունը չի նվիրվում: Տեղ-տեղ արտաքնոցներ կամ իսպառ չկան, կամ յեղածներն ել շատ անհոգությամբ են շինված: Կղկղանքները հաճախ թափվում են բակերում, գոմերում, մարգերում: Ամեն տեղ սովորություն կա բանջարանոցները կղկղանքներով պարարտացնել: Սրա հետևանքը լինում է այն, վոր խոզերն ուտելով այդ կղկղանքները, վարակվում են փորի վորդերով. ապա սըանք մորթվում են. այս վարակված միսն ուտում են մարդիկ և նույնպես վարակվում են: Ճանճերն իրենց թաթիլներով տեղից-տեղ են փոխադրում վորդերի ձվերը, կեղտոտում են աննդամթերքները և այսպիսով նույնպես կարող են վարակել մարդուն:

**Չուրբ.** Դեպի ջուրը մեր ունեցած վերաբերմունքն այնպես է, վոր սա յեկ աղական-

վում է վոչ պակաս, քան հողը: Զրհորները հաճախ այնպես են շինվում, վոր անձրևի լվացած բոլոր աղտեղությունները, վորոնց մեջ շատ անգամ վորդի ձվեր են լինում, կարող են ներծծվել ջրհորի մեջ: Հաճախ աղտեղությունները թափելու համար տեղեր են հատկացվում գետափներում: Զրաղացներին պատվարները լցվում են զոմաղբով, վորի մեջ միշտ մարդկային կղկղանք է լինում:

Սրա հետեվանքն է, վոր բնակված վայրերի մեծ մասում, ուր բացակայում են ջրամատակարարման լավ շինված աղբյուրներ, մարդիկ՝ խմելու հում ջուր գործածելիս՝ կարող են վորդերով վարակվել և, նույն ջուրը տալով յերեխաներին, նրանց ևս վարակում են: Այս վորդերը կարող են տեղական ծագում ունենալ, բայց կարող են լինել նաև «բերովի», այն ել՝ շատ հեռավոր տեղերից:

**Սնունդը:** Դեպի սնունդը մեր ունեցած վերաբերմունքը նույնպես շատ հեռու յե հիգիենայի պահանջներին համապատասխան

լինելուց: Անասունը, բացի մեծ քաղաքներից, մորթվում է կամ սպանդանոցներից դուրս կամ այնպիսի սպանդանոցներում, ուր անասնաբուժական-սանիտարական հսկողություն իսպառ չկա: Մսնդամթերքներն ըստ մեծի մասին մատչելի յեն ճանճերին, բանջարեղենը սովորաբար ուտվում է չմաքրած և չլվացած, իսկ ուտելուց առաջ ձեռքերն ել միշտ չեն լվացվում: Այս բոլորը վերջիվերջո այն հետեվանքն է ունենում, վոր մարդիկ սննդամթերքների միջոցով վարակվում են վորդերով:

Բնակարանը: Առանց կրկնելու այն բոլորը, ինչ վոր կարելի յեր ասել ճանճերի մասին և այլն, կանգ առնենք բնակելի տների մեջ շներ և կատուններ պահելու դեպքերի վրա, ինչպես և հիշենք այն, վոր շատ ու շատ տներում կան մեծ և փոքր ձկներ:

Օրա հետևանքով, ինչպես շներից և կատուններից անընդմիջաբար, այնպես ել լվերի միջոցով, մարդիկ կարող են վարակվել վոր-

դերի վորոշ տեսակով: Վորդերի մյուս տեսակները կարող են փոխանցվել մարդուն մեծ ու փոքր մկներից՝ նրանց կղկղանքների միջոցով:

Յերեխաների՝ վորդերով հիվանդանալու հարցում մեծ նշանակություն ունի ծնողների կուլտուրական մակարդակը, նրանց պարսպունքը, բնակարանային պայմանները և ընդհանուր ընտանեկան կենցաղը: Այս վերջինը վերաբերում է մանավանդ այն ընտանիքներին, վորոնք ապրում են ծանր հակասանիտարական պայմաններում: Շատ անգամ յերեխան չունի իր առանձին մահճակալը, իր առանձին անկողնի ձեռմակեղենը, իր հատուկ անոթները. սովորական բան է նրա համար՝ հասակավորների կամ մեծ յերեխաների հետ միատեղ քնելը: Հասկանալի յե, վոր այսպիսի պայմաններում կան բոլոր տվյալները վարակվելու համար:

Իացի դրանից, կան մի շարք պարասպունքներ, յերբ առանձնապես պետք է զգուշանալ վորդերով վարակվելուց: Այսպես են

հողային աշխատանքները, աղտեղութիւնները  
դուրս կրելը, աղբեր հավաքելը և լվացա-  
րարութիւնը. այս բոլորն այնպիսի զբաղ-  
մունքներ են, վորոնք կապված են վորդերով  
վարակվելու վտանգի հետ: Թուղթ և կար-  
տոն շինելը, վորքան վոր այդ աշխատանքը  
կապված է կեղտոտ լաթեղենների հետ,  
նույն վտանգն է ներկայացնում:

Սպանդանոցային արտադրութիւնը, մսի,  
կաշվի մշակութիւնը, ջրային տրանսպորտը,  
ձկնորսական գործը, ածխահանումը և այլն,  
այս բոլորն այն տեսակ աշխատանքներ են,  
վորպիսի աշխատանքներ կատարելիս մար-  
դիկ վարակման վտանգին են յենթարկում  
իրենց: Պարզ բան է, վոր այս ճյուղերում  
աշխատողներ ունեցող ընտանիքներում մեծ  
մասամբ հիվանդանում են նաև յերեխաները:  
Հետևաբար այդպիսի զբաղմունքի տեր մար-  
դիկ պետք է յուրացնեն հիգիենական ունա-  
կութիւնները, վոր վարակումը յերեխանե-  
րին չփոխադրեն:

## ՎՈՐԴԵՐԻ ՁՎԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻՆ ԱՆԱԼԻԶԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վորդի յուրաքանչյուր տեսակն ունի տար-  
բեր ձևի ու մեծության ձվեր և դրա շնոր-  
հիվ հնարավոր է ճշտորեն ասել, թե վոր  
մակաբույծով է վարակված յերեխան:

Բացի նրանից, վոր բուժական միջոցա-  
ռումների կապակցութամբ անհրաժեշտ է  
կղկղանքների հետազոտումը, ահագին դեր  
են խաղում նմանապէս լաբորատորական մաս-  
սայական հետազոտումները, վորոնց նպա-  
տակն է դրսևորել վորդերով հիվանդներին  
և հայտնաբերել վորդերի տարածվածութիւնն  
առանձին վայրերում: Վորոշելով վորդերի  
այս կամ այն տեսակը, կարելի յէ վորոշել  
նաև նրանց տարածման պատճառները:

Այսպէս, որինակ՝ յեթէ տեսնենք յեղան  
կամ խոզի սուլիտերով հիվանդանալու մեծ  
տոկոս, ապա կարող ենք ասել, վոր տվյալ  
տեղում վատ են պահպանվում ընտանի

կենդանիները, վատ ե պահպանվում արո-  
տատեղիների, գոմերի, խողանոցների մաք-  
րությունը, հետևաբար այդ դեպքում պայ-  
քարի բոլոր միջոցառումները պետք ե ուղ-  
ղված լինեն՝ անասունների խնամքը բարելա-  
վելու, ինչպես և վաճառվող մսի վրա հսկողու-  
թյունն ու կոնտրոլը ուժեղացնելու կողմը:

Այս հետազոտումներն են, վոր այս կամ  
այն մանկական հիմնարկները հետազոտելուց  
հետո, հնարավորություն են տալիս դատելու,  
թե ինչպես ե դրված դրանցում սանիտա-  
րական պահանջների կատարման գործը:

Յեթե գտնվում են մեծ քանակությամբ  
վորդեր, ապա ուրեմն դա նշանակում ե,  
վոր սանիտարական-հիգիենական միջոցա-  
ռումները վատ են անցկացված: Յեթե յե-  
րեխաներին խնամողներն իրենք լավ են  
յուրացրել հիգիենական ունակությունները  
և նույնը պատվաստել են յերեխաներին,  
ապա ուրեմն այս վերջինների հիվանդու-  
թյան տոկոսը նվազում ե:

Այսպես, հետազոտելով Ռոստովի մսուր-  
ներում խնամվող մանուկներին և այն յե-  
րեխաներին, վորոնք չեն կազմակերպված,  
այսինքն մսուրներ չեն հաճախում, գտանք,  
վոր մսուրային յերեխաների մեջ կիսով չափ  
պակաս են վորդերով հիվանդության դեպ-  
քերը: Դա բացատրվում ե նրանով, վոր  
մսուրներում յերեխաներն ավելի լավ են  
խնամվում, քան թե տանը: Մսուրներում  
յերեխաներին հում ջուր չեն տալիս խմելու.  
յերեխաները չլվացած բանջարեղեն չեն  
ուտում: Յերեխաներին լվանում են ինչ-  
պես հարկն ե և հաճախ: Հետազոտման ժա-  
մանակ մենք չտեսանք կեղտոտ յեղունգներ:  
Ճիշտ ե, յերեխաները ամբողջ օրը մսուրում  
չեն անցկացնում և տուն գնալով կարող են  
նույնպիսի հակասանիտարական պայմաննե-  
րով շրջապատված լինել, բայց այստեղ նըշ-  
մարվում ե այն սանիտարական-լուսավորա-  
կան աշխատանքի բարերար ազդեցությունը,  
վոր տարվում ե մսուրներում մայրերի հետ:

Մտւորները մայրերին ընտելացնում են սա-  
նիտարական - առողջապահական ունակու-  
թյուններին, վորոնք նա աշխատում ե պահ-  
պանել նաև տանը:

### ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ասածներիցս պարզ ե, վոր վորդերն այն-  
քան ել անմեղ արարածներ չեն, ինչպես մե-  
ծամասնությունը կարծում ե: Առանձնապես  
վատ են ներգործում նրանք մանուկների  
ածող որպանիզմի վրա: Յերեխաների համար  
շատ ծանր հիվանդությունների պատճառ-  
կարող են դառնալ վորդերը. ուստի յերե-  
խաներին պետք ե առանձնապես պահպանել  
վորդերից: Պայքարը պետք ե մղել յերկու  
ուղղությամբ՝ վարակի աղբյուրը վոչնչաց-  
նելու և նոր վարակումները կանխելու ուղ-  
ղությամբ:

Հիվանդության մասին ամենափոքր կաս-  
կած ունենալու դեպքում ծնողները պետք ե

յերեխաների կղկղանքը հետազոտման ներ-  
կայացնեն և, վորդեր գտնվելու դեպքում,  
բժշկի ոգնության պիմեն: Սակայն, վորդերը  
դուրս քշելուց հետո, պետք ե ձեռք առն-  
վեն ամենակտրուկ միջոցներ, վորպեսզի  
դուրս քշված մակաբույծները վոչնչացվեն  
ինչպես հարկն ե: Հակառակ դեպքում՝ քըշ-  
ված մակաբույծները կեղատելով հողն ու  
միջավայրը, վարակման նոր ոջախներ  
կստեղծեն, և այնուհետև առողջացած մեկ  
հիվանդը կարող ե տասնյակ առողջների  
վարակման պատճառ դառնալ:

Յեթե վորդերը շատ են տարածված, նշա-  
նակում ե մեր ամեն մի քայլին յենթակա  
յենք վարակման վտանգին: Ինչպես արդեն  
գիտենք, տարածման գլխավոր աղբյուրները  
սնդգամթերքներն են և այն միջավայրը, վորի  
մեջ ապրում ենք: Մսեղեն ու ձկնեղեն ար-  
տադրանքների նկատմամբ հարցի լուծումը  
համեմատաբար պարզ ե: Յեթե նրանք մշակ-  
վեն պատշաճ յեղանակով, յեթե հում, վատ

ապխտած և աղը պակաս սննդեղենները  
գործածությունից հանվեն, արդեն դրանով  
գործադրված կլինեն այն միջոցառումները,  
վորոնք բավական են վորդերով վարակում-  
ները կանխելու այն դեպքերում, իհարկե,  
յերբ վարակումը տեղի յե ունենում այդ  
ճանապարհով:

Ավելի բարդ է դրությունը, յերբ մենք  
գործ ունենք վարակման յերկրորդ աղբյուրի  
հետ, այսինքն միջավայրի և այն սննդեղեն-  
ների հետ, վորոնք կեղտոտված են վորդերի  
ձվեր պարունակող կղկղանքներով:

Այս դեպքում առաջին տեղն է բռնում  
հիմնական առողջապահական ունակություն-  
ների պահպանումը: Առանձնապես կարևոր  
է՝ հաճախակի և խնամքով ձեռքերը լվանալ,  
մանավանդ ուտելուց առաջ, կարճ կտրել  
յեղունգները և յաքուր պահպանել նրանք:  
Յե՛վ ամենակարևորն այս ունակությունների  
մեջ — դա արտաքնոցով ոգտվելու այն յե-  
ղանակն է վոր ճերմակեղենն ու մարմինը

կղկղանքով չկեղտոտվի, վորովհետև այսպի-  
սով շատ անգամ վորդերի ձվերն ձեռքի վրա  
յեն ընկնում և ապա նույն ձեռքով բերանն  
են տարվում:

Անհրաժեշտ է հետևել, վորպեսզի այս բո-  
լոր ունակություններն ամենավաղ հասակից  
պատվաստված լինեն մանուկներին:

Չպետք է մոռանալ, վոր յերեխաներն  
ընդհանրապես բնակչության ամենավարակ-  
ված և՛ միջավայրն ապականելու տեսակե-  
տից՝ ամենավտանգավոր մասն են կազմում:

Դրա համար է, վոր մանկական հիմնարկ-  
ների աշխատավորներին անհրաժեշտ է լավ  
ծանոթ լինել վորդերով վարակվելու հարցե-  
րին, վորպեսզի կարողանան գործնականում  
կիրառել այդ հիվանդությունը կանխելու  
բոլոր միջոցառումները: Սանիտարական մի-  
նիստումը (նվագագույնը) — դա մաքրության  
այն տարրական կանոններն են, վոր մենք  
պարտական ենք մեր առորյա կյանքում կի-  
րառելու ինչպես մեր բնակարաններում,



այնպես ել գործարանում, ցեխում, հանրա-  
յին ճաշարանում, կոոպերատիվում և այլն:

Սանսիֆիմումի կատարումն առանձնապես  
կարևոր նշանակություն ունի մանկական  
հիմնարկներում, մսուրներում, ոջախներում,  
մանկահրապարակներում և դպրոցներում:

Իբրև յեզրակացություն՝ պետք է ասել,  
վոր յեթե պատերազմի և ավերածություն  
նախկին տարիներում, մի շարք հակասանի-  
տարական պայմանների, ժողովրդի տեղից-  
տեղ գաղթելու և այլնի հետևանքով հասկա-  
նալի յեր վորդով հիվանդների թվի խոշոր  
աճումը, ապա ներկայումս, յերբ մենք կուլ-  
տուրական կյանք ենք կառուցում, այլևս  
անհանդուրժելի յե այդ յերևույթը. չպետք է  
մոռանանք, վոր յերեխաները վորդերի հի-  
վանդությունամբ տառապում են միայն շնոր-  
հիվ մեր տգիտություն, մեր անճշտակա-  
տարություն և մեր անմաքրասիրություն:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն . . . . .	3
Խոնչ և վորդը կամ ճիճուն . . . . .	5
Խոնչպես են բազմանում վորդերը . . . . .	6
Յերեխաներն ի՞նչպես են վարակվում վորդով	10
Խոնչ ֆլաս են հասցնում վորդերը յերեխաների առողջությանը . . . . .	12
Յերեխաների մոտ ամենից հաճախ յերևացող վորդերը . . . . .	14
Սահարիդները (վիշապակները) . . . . .	14
Սրատուտ վորդերը (պիտուկներ) . . . . .	32
Մագորդը . . . . .	44
Յերիգակները կամ տափակ վորդերը . . . . .	48
Խողի սուլիտերը կամ կեռիկավոր վորդը . . . . .	49
Յեզան սուլիտերը . . . . .	54
Լայն յերիցորդը կամ ձկան սուլիտերը . . . . .	56
Թզուկային կեռիկավոր վորդը . . . . .	59
Եխինոկոկ (պարկորդ) . . . . .	63
Կենցաղային տարբեր պայմանների ազդեցու- թյունը վորդնային հիվանդությունների վրա	65
Վորդերի ձվերի լաբորատորիային անալիզի նշանակությունը . . . . .	71
Յեզրակացություն . . . . .	74

ԸՆԿ. ԸՆԹԵՐՅՈՂ

Հայսնեցեֆ ձեռ կարծիքը այս գրքի մասին  
հետեվյալ հասցեով.

Г. Ростов-Дон, Буденновский пр. 30,  
Азово-Черноморское Краевое Книго-  
издательство, армянская секция.

Նամակները կառելի յե ուղարկել անանց  
նամակադրուով:

Отв. Ред. Г. А. Потенц

Тех. ред. О. Тер-Давыдов

Издание 176/4436 Объем 2,5 печ. листа. Статформат А6 105x148  
Уполкрайлит СС-11415. Тираж 1000 экз. Заказ 1899 Сдано в набор  
3/IV-1935 г. Подписано в печать 29/IV-1935 г.

Типография им. „Стачки 1902 года“ г. Ростов на Дону

«Ազգային գրադարան»



NL0271527

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.  
Цена 50 коп.

4591

5034

На армянском языке

Доктор ПИВОВАРОВА Е. Д.

**ГЛИСТНЫЕ ЗАБОЛЕВАНИЯ  
У ДЕТЕЙ И БОРЬБА С НИМИ**

**АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ  
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО**  
Ростов н-Д., Буденновский пр., № 30

**Գ Ր Ա Պ Ա Հ Ե Ս Ը**  
Ռուսոսկ-Դաճ, Մոսկովապոլս, № 53  
ԳՐԱԿԵՆՏՐՈՆ (ԿՆԻԳՈՑԵՆՏՐ)